Լեռնուտ

Լեռնուտ բնակավայրի վարչական տարածքը կազմում է 879.60հա, բնակչությունը 157մարդ: Ունի դպրոց, մանկապարտեզ: Բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 12 կմ հեռավորության վրա, տեղադրված է Շիրակի լեռնաշղթայի փեշերին, բլրապատ տարածքում՝ ծովի մակարդակից 1830մ բարձրության վրա: Մոտակայքում ունի աղբյուրներ, որոնք ջրմուղով հասցվում են գյուղ և օգտագործվում որպես խմելու ջուր: Գյուղի շրջակայքում պահպանվել են հին ամրոց-բերդի ավերակներ, ունի կիսաքանդ եկեղեցի: Գյուղատնտեսական հողատարածքները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ, թռչնապահությամբ, հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների մշակությամբ: